

ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌ

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ՈՐ Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, յԱՐԺԱՆԹԻՆ

Միրեցեալ և պատուական անդամք Համագումարի,

Սրտի ամհուն գոհունակութեամբ և ուրախութեամբ վառ զգացումով ստացանք Ձեր 28 Յուլիսի (1997) նամակը, որով կը յայտնէք եղջանկաբեր լուրը Արժանթինի Հայկական Ազգային Համագումարի կազմութեամբ, նպատակ ունենալով անվերապահօրէն գորավիզ կանգնիլ Ազատ ու անկախ Հայրենիքին:

Քաջածածօք ըլլալով Արժանթինի մեր հայ ժողովուրդին, յատկապէս Մեր անդորանիկ Հոփուապետական այցելութեանն ետք (Օգոստոս 1996), Մենք ամենաբարձր գնահատանքով կ'ողջունենք Համագումարի կազմութիւնը և անոր մէջ կը տեսնենք ճշմարիտ, գործնապաշտ հայրենասիրութեամբ շօշափելի փաստը: Կը յիշէք որ Մեր այցելութեամբ ընթացքին եկեղեցիներու, սրահներու, վարժարաններու թեմերէն Մեր հրապարակային պատգամներու ընթացքին մէկէ աւելի անգամներ ըսինք որ հայրենասիրութեան իսկական անունը հայրենաշինութիւն է: Հայրենիքը սէրէն արտահոսող քրտինքով միայն կրնայ վերակառուցուիլ որպէս ազատ, անկախ և ժողովրդավար պետութիւն և ազգ:

Ահա, աւելի քան երկու տարիներէ ի վեր որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց, այստեղ մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի մէջ եկեղեցական պատասխանատւութեամբ այս ծայրագոյն և ծանրագոյն և սուրբ պարտաւորութեամբ մէջէն Մեր կեանքն ու գործը միաջադախած ենք մեր մայր հայրենիքի և ողջ հայ ժողովուրդի կեանքին հետ: Անձամբ կը բաժնենք թէ՛ ցաւը և թէ՛ ուրախութիւնը մեր հայրենաքնակ ժողովուրդին և կը բերենք Մեր ամբողջական և անվերապահ աշակցութիւնը մեր Հանրապետութեան ամրացման և զարգացման նուիրական գործին: Մեր կեանքի փորձառութիւնը Մեզ բերած է այն անխախտելի և խորագոյն համոզման, որ այսօր, Հայաստանի, Արցախի և շրջակայ երկիրներու ներկայ քաղաքական դրուածքին և կացութեան մէջ մեր ամենամեծ և փրկարար ոյժը մեր համայն ազգի իրական, ճշմարիտ և գործնական միութեան մէջն է: Ոչ ոսկիի և ոչ ալ արծաթի և ոչ ալ քարիտի հանք ունինք: Այժմ մե՛նք ենք մեր ոյժը մեր համահայկական ամբողջութեամբ և միասնական գործունէութեամբ:

Ապրի՛ք, հազար ապրիք, որ Դուք Արժանթինի մէջ օրինակելի վերաբերումով ձեր անսակարկ և անվերապահ զօրակցութիւնը կը յայտնէք Արժանթինի պետութեան ու ժողովուրդին և Հայաստանի պետութեան ու հայ ժողովուրդին փոխարարբերութեանց զարգացման: Կը գնահատենք ձեր լիագոյն մասնակցութիւնը հայոց պետութեան Դեսպանութեան և "Հայաստան" Համահայկական Հիմնադրամի բարոյք և ատոյք գործունէութեան:

Մեր ազգի՝ որպէս քրիստոնէական ազգի՝ ծննդավայրէ՛ն մեր բոլորի Մայր

Աթոռ Ս. Էջմիածնէն քիւր օրհնութիւն ձեզ: Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ ձեզի շնորհէ ոյժ և կորով, քաջութիւն և իմաստութիւն. որպէսզի առատ պտղաբերութեամբ պսակուից ձեր բոլոր գործերը և լիագոյն արդիւնաբերութեամբ արգասատրուից ձեր նուիրեալ ջանքերը, քերելով «*ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր*», ըստ Քրիստոսի Ս. Աւետարանի խօսքին (ՄԱՐԿ.Դ. 20) :

Ողջ լերուք ի Տէր, գորացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոաւ Գիրս Օրհնութեան
ի 11 Օգոստոսի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ է/ 72